

02.04.2016թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մասցակյանյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ.Սարգսյան (իրավաբանական բաժնի պետ), Գ.Մարտիրոսյան (նախագահի խորհրդական), Ն.Բաղդասարյան (տոցիալական ոլորտի և բնասպահականության վիճակագրության բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ս.Պետրոսյան (շինարարության վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում հինգ հարց.

1. «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության» հարցաթերթը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2002-2003 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները Վաշինգտոնի համալսարանին կից առողջության ցուցանիշների և գնահատման ինստիտուտի տվյալների զարգացման մենեջեր Մետյու Իգրաելսոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսովա/

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015թ. հոկտեմբերի 19-ի «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական), 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական) և Ձև թիվ 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ս.Պետրոսյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. «Հաղորդում ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2016 թվականի մարտի 8-ից 11-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ»:

/Զեկուցողներ՝ Ս.Մասցակյանյան, Ա.Սաֆյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության» հարցաթերթը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

հաստատել՝ «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության» հարցաթերթը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2002-2003 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները Վաշինգտոնի համալսարանին կից առողջության ցուցանիշների և գնահատման ինստիտուտի տվյալների զարգացման մենեջեր Մետյու Իգրաելսոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Վաշինգտոնի համալսարանին կից առողջության ցուցանիշների և գնահատման ինստիտուտի տվյալների զարգացման մենեջեր Մետյու Իգրաելսոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2002-2003 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի

ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրատարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015թ. հոկտեմբերի 19-ի «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական), 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական) և Ձև թիվ 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Պետրոսյան/

Որոշեցին՝

1. Հաստատել՝ «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել՝ «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել՝ «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (ամսական) և «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերի լրացման հրահանգը համաձայն հավելված 3-ի:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (ամսական) և «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հուլիսի 9-ի թիվ 10-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 16-Ն որոշումը:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. «Հաղորդում ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2016 թվականի մարտի 8-ից 11-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ»:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ